

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶ**

**ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Արթուր Կարապետյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 19 դեկտեմբերի 2016 թիվ _____ որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն
- 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը
- 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....
- 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները.
- 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....
- 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում
- 3.1. Համայնքի զարգացման տեսլական.....
- 3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....
4. ՀՀԶԾ ֆինանսավորում
5. ՀՀԶԾ մոնիթորինգ..... **Ошибка! Закладка не определена.**

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

ՀՀ Արագածոտն մարզի Նորաշեն համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀՀՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր: ՀՀՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները նրա գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀՀՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ օրենքի 37-րդ, 38-րդ և 53-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՖՄ ՀԿ փորձագետների կողմից մշակված և ՀՀ ՏԿԱԻՆ կողմից 2014 թվականին հավանության արժանացած՝ «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանությունը» և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- ✓ համայնքի ֆինանսական կարողությունը.
- ✓ համայնքի բնակչության թվաքանակը.
- ✓ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում առկա ենթակառուցվածքները և մատուցվող հանրային ծառայությունները.
- ✓ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի առանձնահատկությունները.
- ✓ համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

ՀՀՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում հանրային ծառայությունների մատուցմանը վերաբերող և դրանցով պայմանավորված՝ լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները, համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերը համաչափ զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) հնարավորությունները, համայնքի տարածքում պատշաճ կառավարման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը) և դրանց կառավարման միջոցառումները:

Համայնքի 2017-2021թթ. ՀՀՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀՀՀԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող ՀՀՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը՝

փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, ՔՀՄՀ կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ լիակատար

փոխըմբռնում ՀՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀՀԾ-ի 1-ին բաժինը ներառում է՝ համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր, բնակավայրային և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը՝ հաշվի առնելով ՀՀԾ-ի մշակման մեթոդաբանական չափանիշների ազդեցությունը համայնքի ՏԻՄ-երի գործունեության ոլորտների կազմի վրա, համայնքում առկա սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների ֆիզիկական վիճակի գնահատումը, դրանց շահագործման, պահպանման և նորոգման հետ կապված խնդիրները, համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում հիմնական

ենթակառուցվածքների առկայության և ընդհանուր վիճակի, ինչպես նաև դրանց զարգացման հնարավորությունների, կարողությունների ու ռեսուրսների վերլուծումը և գնահատումը: Համայնքի ընդհանուր և ոլորտային կարիքների գնահատման հիման վրա կազմվել է համայնքում առկա հիմնախնդիրների ցանկը՝ առանձնացնելով նրանք, որոնց լուծումը նպատակահարմար է ներառել սույն ՀՀԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից:

Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈԻԹՀ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀՀԾ-ի 2-րդ բաժինը ներառում է՝ համայնքի երկարաժամկետ տեսլականը, զարգացման ռազմավարությունը և սույն ՀՀԾ-ի հիմնական նպատակները:

ՀՀԾ-ի 3-րդ բաժինը ներառում է՝ պետության, միջազգային և տեղական, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ կազմակերպությունների կողմից համայնքում գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական, մարզային, տարածաշրջանային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերն ու միջոցառումները:

ՀՀԾ-ի 4-րդ բաժինը ներառում է՝ համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական դրամաշնորհներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային տվյալները:

ՀՀԾ-ի 5-րդ բաժինը ներառում է՝ ԲԱԽ-երի կողմից, ըստ բնակավայրերի, առաջարկված առաջնահերթ ոլորտային ծրագրերի ցանկը, ապա՝ համայնքի ղեկավարին կից գործող ՀՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի կողմից համայնքի զարգացման ոլորտային ծրագրերի ընտրությունը, դրանց առաջնահերթությունների սահմանումը՝ ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, բացահայտված կարիքներից ու հիմնախնդիրներից, ենթակառուցվածքների վիճակից և ՀՀԾ-ի հիմնական նպատակներից: Բաժնում ձևակերպվել և ամփոփվել են ՀՀԾ-ում ներառվող ոլորտային ծրագրերը՝ օգտագործելով դրանց կազմման՝ Մեթոդաբանությունում բերված օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք հինգ տարիների: Բաժնում ներկայացվում են նաև ՀՀԾ-ում ներառված ոլորտային ծրագրերն՝ ըստ առանձին բնակավայրերի և առաջիկա հինգ տարիների:

ՀՀԾ-ի 6-րդ բաժինը ներառում է՝ համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի օտարման հնգամյա ծրագիրն՝ ըստ առանձին տարիների:

ՀՀԾ-ի 7-րդ բաժինը ներառում է՝ ՀՀԾ-ի իրականացման մշտադիտարկման (մոնիթորինգի) և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման և քննարկման ձևաչափերը:

ՀՀԾ-ի եզրափակումը ներառում է՝ համառոտ մոտեցումներ և դրույթներ՝ ՀՀԾ-ում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման, քննարկման և հաստատման գործընթացների վերաբերյալ:

ՀՀԾ-ի հավելվածները ներառում են՝

- ✓ համայնքապետարանի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը,

- ✓ համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը՝ ըստ առանձին բնակավայրերի, համայնքի բնակավայրերում սոցիալ-տնտեսական հիմնական ենթակառուցվածքների առկայությունը և ընդհանուր վիճակը,

- ✓ համայնքի հողային հաշվեկշիռը՝ ըստ առանձին բնակավայրերի,

- ✓ համայնքում առկա անասնազխաքանակի տվյալներն՝ ըստ առանձին բնակավայրերի,

- ✓ համայնքի հիմնական ցուցանիշների գնահատումը և կանխատեսումը,

- ✓ համայնքի 2017-2021թթ. ՀՀԾ-ում ներառված ոլորտային ծրագրերի ձևակերպումներն՝ ըստ դրանց օրինակելի ձևի,

- ✓ համայնքի 2017-2021թթ. ՀՀԾ-ում ներառված ոլորտային ծրագրերը:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Նորաշեն բնակավայրը կազմավորվել է 1828-1832 թ-ին: Գյուղի նախնիները գաղթել են Ալաշկերտի շրջանի Քյաքյաչ գյուղից՝ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Գյուղը գտնվում է Արագածի ստորոտում: Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 2000 մ բարձրության վրա: Գյուղը գտնվում է Արագածոտն մարզի Արագածի տարածաշրջանում՝ Արագածից հյուսիս-արևմուտք՝ Շարայի լեռան լանջին, սահմանակից է Շիրակի մարզի Մեծ Մանթաշ և Արևշատ համայնքներին: Գյուղի աշխարհագրական դիրքը նպաստավոր է, հաղորդակցման տեսակետից, քանի որ նրա միջով անցնում է միջպետական Երևան-Ապարան-Արթիկ ավտոմայրուղին:

Գյուղը օգտվում է Մանթաշի ջրամբարից, կառուցված է նաև համայնքի Օրվա կարգավորիչ ջրամբար, գյուղն ապահովված է մոտ 85% խմելու ջրով: Կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ ջրով: Տեղումները երբեմն չափից ավելի են լինում, որից տուժում է գյուղացին՝ չկարողանալով աշխատանքները ժամանակին կազմակերպել:

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքի առկա բնակչությունը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1247 մարդ, որոնցից տղամարդիկ կազմում են 659 մարդ, իսկ կանայք՝ 588: Աղյուսակ 1. Համայնքի առկա տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները /01.01.2016 թվականի դրությամբ /

h/h	Ցուցանիշները	
1.	2	3
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում	1110
	Տղամարդիկ	572
	Կանայք	538
	0-6 տարեկան , այդ թվում՝	141
	- 0-3 տարեկան	76
	3-6 տարեկան	65
	7-17 տարեկան	153
	18-63 տարեկան	384
	63-ից բարձր տարեկան	102
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում	152
	Տարիքային և աշխատանքային	80
3.	Փախստականներ	0
4.	Միակողմանի ծնողազուրկ	6
5.	Երկկողմանի ծնողազուրկ	0
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	10
8.	Հաշմանդամներ, այդ թվում	45
	Մանկուց հաշմանդամներ	6
9.	Աշխատունակներ	695
10.	Զբաղվածներ	631
11.	Գործազուրկներ՝ այդ թվում	410
	Գրանցված	20
12.	Առկա տնային տնտեսությունների թիվը	262
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը, այդ թվում	45
	Նպաստառու ընտանիքների թիվը	32
14.	Հայրենական մեծ և արցախյան պատերազմներում զոհվածների ընտանիքների թիվը	8
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը	10
	Այդ թվում անօթևան	0
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	50
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	220
18.	Արտագնա /սեզոնային/	370

	աշխատանքի մեկնողների թիվը	
--	---------------------------	--

2015 թվականի մարտի 15-ին կայացած ընտրությունների արդյունքում ընտրվել է համայնքի ավագանին՝ բաղկացած 5 հոգուց, 2016 թվականի սեպտեմբերի 18-ին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքում վերընտրվել է համայնքի ղեկավարը, որը ձևավորել է համայնքի աշխատակազմը՝ բաղկացած 9 աշխատակցից:

- Համայնքի ղեկավար-	ՀՀ դրամ	1 միավոր, 280.0 հազ.
- Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար	ՀՀ դրամ	1 միավոր, 140.0 հազ. ՀՀ
- Գլխավոր մասնագետ / հաշվապահ /	ՀՀ դրամ	1 միավոր, 139.0 հազ.
- Առաջատար մասնագետ	ՀՀ դրամ	1 միավոր, 92.0 հազ.
- Առաջատար մասնագետ	ՀՀ դրամ	1 միավոր, 92.0 հազ.
- Առաջատար մասնագետ	ՀՀ դրամ	1 միավոր, 92.0 հազ.
- Մշակույթի տան տնօրեն	ՀՀ դրամ	1 միավոր, 78.0 հազ.
- Հավաքարար	հազ. ՀՀ դրամ	1 միավոր, 78.0
- Վարորդ	հազ. ՀՀ դրամ	1 դրույք, 88.0

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ-ի թիվ 51 որոշմամբ: Հետագայում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը համալրվել է մանկապարտեզի շենքով (2013թ.) և 2.3կմ խմելու ջրագծով (2000թ.): Համայնքում առկա սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների ընդհանուր վիճակը կարելի է համարել բավարար, սակայն համայնքի զարգացման համար անհրաժեշտ է հետևողականորեն վերակառուցել, վերափոխել ենթակառուցվածքները: Համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների վիճակի գնահատումը տրված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատում

Հ/հ	Կառույց	Հասցե	Կառուցման տարեթիվ	Մակերես (քառ. մ.)	Ընդհանուր վիճակի գնահատական	Նորոգման / վերականգնման / փոխարինման կարիք	Այլ նշումներ
1.	Մշակույթի տուն	3-րդ փողոց 4 շենք	1960	258.68	վատ	ունի	
2.	Մանկապարտեզի շենք	7-րդ փողոց 1 նրբ, 12/6	1969		գերազանց	չունի	Հիմնա նորոգվել է 2013թ
3.	Գերեզմանոց	10-րդ փողոց			լավ	ունի	
4.	Խմելու ջրի ջրագիծ		1984	15կմ	բավարար	պարբերական վերանորոգումներ	
5.	ՕԿՋ	10-րդ փող 1 նրբ. 2/1	2012	3537.0	գերազանց	չունի	
6.	Բաղնիքի շենք	6փողոց 14	1972	194.34	վատ	ունի	

Համայնքի տարածքում գործում են՝ միջնակարգ դպրոցը, փոստը, «Նորաշենի արոտագտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվը, «Նորաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը, համայնքի անհատ ձեռներեցների կողմից շահագործվում են երեք խանութներ:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

Համայնքը չունի գլխավոր հատակագիծ, որի պատճառը ֆինանսական միջոցների բացակայությունն է:

Կենցաղային աղբի կուտակման համար համայնքից մոտ 2 կմ հեռավորության վրա առանձնացված է տարածք, որտեղ տեղափոխվում է համայնքի աղբը, որը հավաքվում է ամսական երկու անգամ՝ գյուղապետարանի միջոցներով և տեխնիկայով:

Համայնքի Կենտրոնական և Երևան տանող մայրուղու վրա տեղադրված են որոշ քանակությամբ լուսավորման լամպեր, տարվում են աշխատանքներ համայնքի բոլոր հիմնական փողոցները լուսավորելու համար:

Համայնքում չկան բազմաբնակարան բնակելի շենքեր: Բնակելի ֆոնդը բաղկացած է միայն առանձնատներից, որոնց թիվը 200 է: 1988թ. Երկրաշարժի ժամանակ վնասված առանձին առանձնատները, չնայած կատարված որոշ ամրացումներին, դեռևս վերանորոգման կարիք ունեն: Զգալի է առանձնատների կարիք ունեցող երիտասարդ ընտանիքների թիվը:

Համայնքի վարչական տարածքը	2220 - հա, որից՝
Բնակավայրի տարածքը	163.68 - հա
այդ թվում՝ կառուցապատվածը	65 - հա
Վարելահողեր	934.75 - հա
Արոտավայրեր	420.85- հա
Տնամերձ հողեր	138.98 - հա
Սեփականաշնորհված հողեր	722.63 -հա
Մեկ հողաբաժնի չափը՝	1.70 - հա
Դպրոց	2.01 - հա
Հուշարձան	0.29 - հա
Գերեզմանոց	1.57- հա
Վարձակալությամբ է տրված մոտ 214 հա հողեր, որից պետ ռեզիստրում գրանցված՝ 144 հա:	

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի կողմից բյուջեի նկատմամբ հավաքագրվող եկամուտները գրեթե անփոփոխ են՝ բացառությամբ գույքահարկի գծով, որով նախատեսվում է յուրաքանչյուր տարի 200000 ՀՀ դրամի աճ, իսկ մնացած եկամուտների աճը պայմանավորված է համայնքին տրամադրվող դոտացիայի չափով:

ՀՀԶԾ-ի իրականացման համար որպես ֆինանսական աղբյուր օգտագործվում է և՛ համայնքի տարեկան բյուջեի եկամուտները, և՛ ֆինանսական այլ աղբյուրներ:

Համայնքի տարեկան բյուջեի հաշվին իրականացվում է՝

1. Աշխատակազմի պահպանումը
2. Մանկապարտեզի գործունեության իրականացումը
3. Համայնքի մշակույթի տան վերանորոգումը
4. Փողոցների լուսավորության անցկացումը
5. Բնակչության սոցիալական պաշտպանությունը
6. Աղբահանությունը

և այլն:

Այլ ծրագրերի իրականացման համար համայնքին հասանելի այլ աղբյուրներ կարող են հանդիսանալ ՀՀ պետբյուջեից տրամադրվող գումարները, ՀՀՍՆՀ-ի կողմից տրամադրվող

գումարները և այլ ֆինանսական միջոցներ, որոնց արդյունքում հնարավոր կլինի համայնքում իրականացնել հետևյալ ծրագրերը՝

1. Համայնքի գազաֆիկացումը
 2. Համայնքային կենտրոնի կառուցումը
 3. Համայնքի խմելու ջրի ներքին ցանցի անցկացումը
 4. Մշակույթի տան վերանորոգումը
 5. Փողոցների լուսավորությունը
 6. Սոցիալական պաշտպանությունը
 7. Աղբահանությունը
- և այլն:

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ:

Համայնքի հողերն անջրդի են: Այդ պատճառով համայնքը դժվարությամբ է կազմակերպում գյուղ. մթերքների արտադրությունը: Մեծ չարչարանքների, նյութական ու դրամական կորուստների գնով չնչին արդյունքներ են ստացվում: Ազգաբնակչությունը հիմնականում զբաղվում է ցորենի, կարտոֆիլի, բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությամբ:

Անասնապահության բնագավառում հիմնականում պահում են կովեր, ոչխարներ, թռչուններ: Տարերային աղետների պատճառով հաճախացել է բերքի կորուստները: Խիստ կարիք կա գյուղ. տեխնիկայի, որի ձեռք բերումը շատ դժվար է՝ թանկ լինելու պատճառով: Համայնքում առկա տրակտորների թիվը 22 -ն է, որոնց մոտ 50 տոկոսը հնամաշ է:

Համայնքի տարածքները հիմնականում մաքուր են: Համայնքում կան նաև արհեստական լճակներ: Գետի ավազանի մաքրությունը ապահովելու համար անհրաժեշտության դեպքում իրականացվում են մաքրման աշխատանքներ:

Համայնքով է անցնում դեպի Երևան տանող պետական ճանապարհը, ինչպես նաև դեպի Վանաձոր տանող միջհամայնքային ճանապարհը, որոնք ասֆալտապատ են: Ասֆալտապատ ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 2.8 կմ: Ներհամայնքային ճանապարհները հիմնականում գրունտային են /մի մասը խճապատ/ որոնց ընդհանուր երկարությունը մոտ 9 կմ է:

Դաշտային ճանապարհները հողային են, որոնց վիճակը բավարար չէ:

Համայնքի տարածքում գործում են անհատ ձեռներեցների պատկանող 3 խանութներ, որոնք հիմնականում փոքր խանութներ են և զբաղվում են խառը ապրանքների /սնունդ, հագուստ, տնտեսական ապրանքներ և այլն/ վաճառքով: Համայնքում գործող գրանցված ծառայություններ /վարսավիրանոց, կոշկակար և այլն/ չկան,

Համայնքն ունի մեկ միջնակարգ դպրոց, որի շենքային պայմանները բավարար են: Դպրոցում սովորում են 143 աշակերտներ: Դպրոցն ունի 23 ուսուցիչներ և տեխ. սպասարկող անձնակազմ՝ 8 հոգի:

Համայնքի մշակույթային կյանքը աստիճանաբար մտնում է հունի մեջ: Մշակույթի տունը մասնակի վերանորոգվել է, սակայն կա ենթակա է կապիտալ վերանորոգման, որը մեծապես կնպաստի մշակույթային կյանքի ակտիվացմանը: Մշակույթի տունն ապահովված չէ

համապատասխան գույքով, սակայն ունի խաղասենյակ: Համայնքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ նվիրված հիշարժան օրերին:

Համայնքում գործում է մեկ բուժ. ամբուլատորիա, որը գտնվում է դպրոցի շենքում և որտեղ առկա է համապատասխան գույք: Բուժամբուլատորիան ունի մեկ բուժքույր:

Համայնքում սպորտի զարգացման համար նպաստավոր պայմաններ է ստեղծում դպրոցին կից կառուցված սպորտդահլիճը: Այն նույնպես կահավորված է անհրաժեշտ գույքով:

Համայնքում հանգստյան գոտիներ չկան: Համայնքը ունի ֆուտբոլի դաշտ, որտեղ պարբերաբար անց են կացվում ֆուտբոլային խաղեր: Համայնքի բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է և անասնապահությունը: Գրանցված գործազուրկների թիվը մոտ 20 է, սակայն ի նկատի ունենալով, որ համայնքի հող ունեցող բնակչության մի մասը չի զբաղվում գյուղատնտեսությամբ՝ գործազուրկների փաստացի թիվը ավելի մեծ է: Փարոս համակարգում ընդգրկված են 31 ընտանիքներ՝ 2014 թվականի փետրվար ամսվա դրությամբ:

Համայնքային կարևորագույն հարցերի լուծումը իրականացվում է ավագանու միջոցով բնակչության շրջանում իրականացվող հարցազրույցների և հանդիպումների ընթացքում արված առաջարկությունների հիման վրա: Առավել ծավալուն և կարևորագույն հարցերի լուծման համար գումարվում են համայնքային ժողովներ:

Հանրային լսումների և քննարկումների արդյունքում է ընդունվել 2017 թվականի բյուջեի նախագիծը:

Համայնքում ռիսկային է համարվում տարերային աղետները /կարկուտ, սելավներ, ուժեղ քամիներ, ձնաբքեր, ցրտահարություններ, երաշտներ և այլն/:

Համայնքը փոքր է և բիզնեսի զարգացումը բարձր մակարդակի վրա չէ: Համայնքը հիմնված է հիմնականում գյուղատնտեսական և անասնապահական արտադրանքի անհատական արտադրությամբ: Համայնքի ավագանին և ղեկավարը հաճախակի հանդիպումներ են կազմակերպում բնակչության հետ : Նրանց փոխհարաբերությունները բարձր մակարդակի վրա են: Համայնքի ՏԻՄ-երը հատկապես օժանդակում են գյուղացիական տնտեսություններին՝ խորհրդատվության և տնտեսության զարգացման նպատակով:

Այսպիսով, համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքում կարելի է առանձնացնել համայնքի հետևյալ խոչընդոտներն ու դժվարությունները՝ **աշխատատեղերի պակասը, գյուղ. ապրանքների սպառման դժվարությունները**, և առկա հիմնախնդիրների հետևյալ ցանկը՝

- գազաֆիկացման բացակայություն
- համայնքային կենտրոնի բացակայություն
- խմելու ջրի ջրագծի մաշվածություն
- փողոցային լուսավորությամբ չապահովված փողոցների առկայություն
- գյուղատնտեսական հողատարածքների ոռոգման բացակայություն
- համայնքի գլխավոր հատակագծի բացակայություն
- ներհամայնքային ճանապարհների բարելավման բացակայություն

2.6 . ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՀՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքում մեծ է տարբեր մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն ունեցողների թիվը:
- Միջպետական մայրուղին անցնում է գյուղի միջով և հնարավորություն է տալիս համայնքի բնակիչներին հաղորդակցվելու և առևտուր անելու Արթիկի և Թբիլիսիի հետ:
- Գյուղը գազաֆիկացված չէ:
- Համայնքը ունի ոռոգման ցանց:
- Խմելու ջրի մատակարարումը կենտրոնացված է:
- Գյուղում կա 17-րդ դարի եկեղեցի, 1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձան:
- Գյուղում գործում են -“Արոսոգտագործողների միավորում ” ՍԿ-ն:
- Աշխատուժի առկայություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը:
- Բարձր է գործազրկության մակարդակը:
- Անգլերեն լեզվի ուսուցում չկա /դպրոցում օտար լեզուն գերմաներենն է/:
- Գյուղացու եկամուտները շատ ցածր են, կապված հողերի ոչ բավարար ու ճիշտ մշակմամբ, ինչպես նաև պարբերաբար կրկնվող բնակլիմայական աղետներով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են գյուղատնտեսությունը /դաշտավարություն, անասնապահություն/:
- Համայնքի զարգացման վրա ազդեցություն կարող է ունենալ նաև մեծ աշխատուժի առկայությունը, ԲՈՒՀ-ական և միջն. մասն. կրթությամբ մասնագետների մեծ թիվը, համայնքում գործող տարբեր խմբերի և կազմակերպությունների առկայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆՔՆԵՐԸ

- Տարերային բնական աղետները:
- Բնակչության սոցիալ-տնտեսական վատ վիճակը, որի հետևանքով հնարավոր է բարձրանա արտագաղթի, գործազրկության մակարդակները:
- Խմելու ջրի ներհամայնքային ցանցի մաշվածությունը, ոռոգման համակարգի ոչ ամբողջական լինելը

- Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները, որը մեծ վտանգ է ստեղծում բյուջեի կատարման համար:
- Վարելահողերի մի մասի չմշակելու հետևանքով հողերի որակի վատացումը և այլն:

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Նորաշեն համայնքի տեսլականն է՝

Հետևողական բարեփոխումների շնորհիվ համայնքը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և բարեկեցիկ բնակավայր, որտեղ առկա կլինեն զարգացած գյուղատնտեսությունը /նոր սորտերի մշակաբույսերի աճեցում, որոնք կբերեն բերքատվության բարձրացման, նոր ցեղատեսակների և տոհմային անասունների ձեռք բերում, որը կնպաստի մթերատվության բարձրացմանը/, գյուղ.ապրանքների վերամշակումը:

Վերը նշված տեսլականին հասնելու համար համայնքի ՏԻՄ-երը և աշխատակազմը իրականացնելու են հետևյալ ռազմավարությունը: Իրականացվելու է այնպիսի համայնքային քաղաքականություն, որի շնորհիվ հետևողականորեն կբարելավվեն համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, կընդլայնվեն համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների շրջանակները և կբարձրացվի դրանց հասանելիությունն ու մատչելիությունը: Կյանքի են կոչվելու պատշաճ կառավարման սկզբունքները: Հատկապես շեշտը դրվելու է տեղական ժողովրդավարության ամրապնդման, հիմնախնդիրներին արձագանքելու պատրաստակամության, հրապարակայնության և թափանցիկության, անբասիր վարքի ապահովման, հստակ ֆինանսական կառավարման, սոցիալական միասնության ապահովման, բնակչությանը իրազեկման, որոշումների կայացմանը բնակիչների մասնակցության ապահովման և հաշվետվողականության բարձրացման մեխանիզմների ներդրմանը և հետևողականորեն դրանց իրականացմանը:

Հնգամյա ժամկետում բարեփոխումներ կատարելով նախատեսվում է համայնքում հասնել հետևյալ հիմնական նպատակներին՝

- Բուսաբուծության և անասնապահության զարգացում:
- Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման կազմակերպում:
- Համայնքային ծառայությունների մատուցման բարելավում:
- Համայնքի բնակչության մշակութային կյանքի, սպորտի և հանգստի կազմակերպում:
- Գործարար միջավայրի բարելավում:

4. ՀՀԶԾ ֆինանսավորում

Նորաշեն համայնքի ֆինանսական կարողությունները մեծ չեն: 2017-2021թթ., ըստ կանխատեսումների համայնքի բյուջեի մուտքերը կկազմեն 156880.2 հազար դրամ կամ միջին տարեկան հաշվով՝ 31376.5 հազար դրամ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ.

բյուջեների մուտքերի կանխատեսումը (հազար դրամ)

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. նախատ.	2016թ. փաստ.	2017թ. փաստ.	2018թ. նախատ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4		5	6	7	8	9
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	16067,0	19759,7	21731,1	28000,9	28354,4	30354,4	32372,4	34372,4
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	14732,0	18624,7	19596,1	25365,9	25719,4	27719,4	29737,4	31737,4
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	3889,6	4189,6	4389,6	4389,6	4589,6	4789,6	5007,6	5207,6
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	2817,6	4117,6	4317,6	4317,6	4517,6	4717,6	4917,6	5117,6
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	-	-	-	-	-	-	-	-
	Հողի հարկ	2717,6	2717,6	2717,6	2717,6	2717,6	2717,6	2717,6	2717,6
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	1100,0	1400,0	1600,0	1600,0	1800,0	2000,0	2200,0	2400,0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	1100,0	1400,0	1600,0	1600,0	1800,0	2000,0	2200,0	2400,0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	-	-	-	-	-	-	-	-
	Տեղական տուրքեր	72,0	72,0	72,0	72,0	72,0	72,0	90,0	90,0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ	72,0	72,0	72,0	72,0	72,0	72,0	90,0	90,0
	Պետական տուրքեր	-	-	-	-	-	-	-	-
1.5	Այլ հարկային եկամուտներ	-	-	-	-	-	-	-	-
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից	-	-	-	-	-	-	-	-

	կատարվող մասհանումներ								
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ	-	-		-	-	-	-	-
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	11042,04	14235,1	16006,5	20976,3	21129,8	23000,0	25000,0	27000,0
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	-	-		-	-	-	-	-
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	-	-		-	-	-	-	-
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	11042,04	14235,1	16006,5	20976,3	21129,8	23000,0	25000,0	27000,0
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	11042,04	14235,1	16006,5	20976,3	21129,8	23000,0	25000,0	27000,0
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	-	-		-	-	-	-	-
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	-	-				-	-	-
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ	-	-		-	-	-	-	-

2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	-	-		-	-	-	-	-
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	-	-		-	-	-	-	-
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ	-	-		-	-	-	-	-
3.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	1135.0	1135.0	2135.0	2635.0	2635.0	2635.0	2635.0	2635.0
3.1	Տոկոսներ	-	-		-	-	-	-	-
3.2	Շահաբաժիններ	-	-		-	-	-	-	-
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	1135.0	1135.0	1135.0	1135.0	1135.0	1135.0	1135.0	1135.0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	1135.0	1135.0	1135.0	1135.0	1135.0	1135.0	1135.0	1135.0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	-	-		-	-	-	-	-
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ	-	-		-	-	-	-	-
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	-	-		-	-	-	-	-

3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում	-	-		-	-	-	-	-
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	-	-		-	-	-	-	-
3.5	Վարչական գանձումներ	-	-		-	-	-	-	-
	Տեղական վճարներ	-	-		-	-	-	-	-
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	-	-		-	-	-	-	-
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ	-	-		-	-	-	-	-
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից	-	-		-	-	-	-	-
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	-	-		-	-	-	-	-
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից	-	-		-	-	-	-	-

3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	-	-		-	-	-	-	-
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	200.0	200.0	1000.0	1500.0	1500.0	1500.0	1500.0	1500.0
3.9	Այլ եկամուտներ*	1800.0	680.0		2000.0	2000.0	2000.0	2500.0	3000.0
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր								
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր				2800.1	1418.0			
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	-	-		-	-	-	-	-
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	-	-		-	-	-	-	-
1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-	-		-	-	-	-	-
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր	-	-		-	-	-	-	-
	Շարժական գույքի իրացումից մուտքեր	-	-		-	-	-	-	-
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-	-		-	-	-	-	-
2.	Պաշարների իրացումից մուտքեր	-	-		-	-	-	-	-
3.	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր	-	-		-	-	-	-	-
4.	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	-	-		-	-	-	-	-
	Հողի իրացումից մուտքեր	-	-		-	-	-	-	-
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	-	-		-	-	-	-	-

III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)							
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)							
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ	-	-		-	-	-	-
1.1	Արժեթղթեր	-	-		-	-	-	-
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր	-	-		-	-	-	-
	-հիմնական գումարի մարում	-	-		-	-	-	-
1.2	Վարկեր	-	-		-	-	-	-
	-վարկերի ստացում	-	-		-	-	-	-
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում	-	-		-	-	-	-
1.3	Փոխատվություններ	-	-		-	-	-	-
	-բյուջետային փոխատվությունների ստացում	-	-		-	-	-	-
	-ստացված փոխատվությունների գումարի մարում	-	-		-	-	-	-
2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ							
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն	-	-		-	-	-	-
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր	-	-		-	-	-	-
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության,	-	-		-	-	-	-

	պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր								
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում	-	-		-	-	-	-	-
2.2	Փոխատվություններ	-	-		-	-	-	-	-
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր	-	-		-	-	-	-	-
	-փոխատվությունների տրամադրում	-	-		-	-	-	-	-
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը					5500.0			
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս	-	-		-	-	-	-	-
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս	-	-		-	-	-	-	-
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում	-	-		-	-	-	-	-
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի	-	-		-	-	-	-	-

	բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը								
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ	-	-		-	-	-	-	-
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ	-	-		-	-	-	-	-
1.1	Արժեթղթեր	-	-		-	-	-	-	-
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր	-	-		-	-	-	-	-
	-հիմնական գումարի մարում	-	-		-	-	-	-	-
1.2	Վարկեր	-	-		-	-	-	-	-
	-վարկերի ստացում	-	-		-	-	-	-	-
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում	-	-		-	-	-	-	-
1.3	Փոխատվություններ	-	-		-	-	-	-	-
	-փոխատվությունների ստացում	-	-		-	-	-	-	-
	-ստացված փոխատվությունների գումարի մարում	-	-		-	-	-	-	-

5.

6. *)Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջեի հատկացվող գումարը չի մտնում բյուջե տայի նընդհանուր եկամուտների մեջ

5. ՀՀ ՁԾ մոնիթորինգ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերը և միջոցառումներն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են համապատասխան եկամուտներ և ծախսեր: Գործնականում, ՀՀԶԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը և միջոցառումները) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը: ՀՀԶԾ-ի մշտադիտարկումը (մոնիթորինգը) ՀՀԶԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀՀԶԾ և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի և ԲԱԽ-երի կողմից կիսամյակը մեկ անգամ: ՀՀԶԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային և բնակավայրային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների: ՀՀԶԾ-ի ներքին մոնիթորինգի արդյունքները փաստաթղթի տեսքով ՀՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն կներկայացնի համայնքի ղեկավարին, վերջինս էլ օրենքով սահմանված կարգով այն կներկայացնի համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ՝ ՏԱՐԵԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ

Նորաշեն համայնքի 2017-2021թթ. շենքերի, շինությունների և հողամասերի օտարման ծրագիրը նպատակաուղղված է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը և ՀՀԶԾ -ով նախատեսված խնդիրների լուծմանը:

Համայնքի գույքի օտարման համայնքային քաղաքականության հիմնական նպատակներն են՝

- Համայնքային գույքի օգտագործման արդյունավետության բարձրացումը.
- Համայնքային սեփականություն հանդիսացող չօգտագործվող գույքը տնտեսական շրջանառության մեջ դնելը.
- Համայնքային գույքի օտարումից համայնքի բյուջեի մուտքերի ավելացումը:

Համայնքի գույքի օտարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հնգամյա ժամանակահատվածում համայնքը նախատեսում է օտարել մեկ կիսաքանդ և մեկ կիսակառույց շինություններ, ինչպես նաև վարելահողեր:

Աղյուսակ 6. Համայնքի սեփականություն համարվող շենքերի, շինությունների և հողամասերի օտարման հնգամյա ծրագիր

Հ / հ	Շենքի, շինության, հողամասի անվանումը	Հասցեն	Տարածքը / մակերեսը (մ²)	Վիճակի գնահատականը	Այլ բնութագրիչներ	Նախնական արժեքը (հազ. դրամ)				
						2017	2018	2019	2020	2021
1	Բաղնիքի շենք	Ճփ, 14	350	անբավարար	Ենթակա է քանդման կամ վաճառքի	1000,0				
2	Համայնքային ենթակայության բնակավայրերի նշանակության հողերի հողերի օտարում		5000				400.0	500.0		210.0
3	Համայնքի հաշվեկշռում գտնվող թվով չորս բնակելի շենքերի՝ բնակիչների անհատույց տրամադրում		900.0	բավարար						

4	Համայնքային կենտրոնի կառուցմ ան համար հողա մասի անհատույվց տրամադրում		4000					40000.0		
---	---	--	------	--	--	--	--	---------	--	--

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Նորաշեն համայնքի սույն զարգացման քառամյա ծրագիրը իրականացվելու է համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների, աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների և համայնքի բնակիչների կողմից: ՀՀԶԾ -ի իրականացման ընդհանուր պատասխանատուն համայնքի ղեկավարն է: Յուրաքանչյուր ոլորտային ծրագրի համար կնշանակվեն պատասխանատուներ, որոնք պարբերաբար հաշվետվություններ կներկայացնեն համայնքի ղեկավարին: Յուրաքանչյուր տարվա ավարտին գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը ոլորտային ծրագրերի ղեկավարների հաշվետվությունների հիման վրա կպատրաստի ՀՀԶԾ -ի կատարման տարեկան հաշվետվությունը

Ծրագրերի մշտադիտարկման (մոնիտորինգի) և վերահսկման համար կձևավորվեն մշտադիտարկման և վերահսկման խմբեր, որոնցում կնդգրկվեն համայնքի ավագանու անդամներ, համայնքի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև համայնքի ՀԿ-ների ներկայացուցիչներ և համայնքի բնակիչներ: Այդ ծրագրերի իրականացման անմիջական հսկողությունը կիրականացնի համայնքի ղեկավարը:

ՀՀԶԾ-ի վերահսկողությունը կիրականացնի համայնքի ավագանին ձևավորելով ժամանակավոր հանձնաժողով, որի կազմում կընդգրկվեն նաև քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ներկայացուցիչներ:

Սույն ՀՀԶԾ -ի իրականացման տարեկան և հնգամյա հաշվետվությունները համայնքի ղեկավարը կներկայացնի հանրային քննարկումների, այնուհետ համայնքի ավագանու քննարկմանը: Անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր տարի, ՀՀԶԾ -ում կկատարվեն փոփոխություններ և լրացումներ: